

քիս այլ և այլ կողմերը գտնուած անգլիացիները մէկ տեղ համրելու ըլլանք, ինչպէս Սիւրբալի, Կահանգացը, Տրնդկաստանիները, Վերիկայի ամէն տեղում մէջ գտնուածները որոնք գաղթականութեամբ ցրուած են՝ չէ թէ 27 միլիոն կ'ելլէ անգլիացւոց ազգը հապա 60,65 միլիոն ալ կը հասնի։ Ուրիշ անգամներով կը խօսինք անգլիացւոց կառավարութեան կերպին, հարստութեանը, վաճառականութեան, ձեռագործներուն և ուրիշ իրենց յատկութեանցը վրայ, որով աւելի պայծառ գաղափար կրնանք տալ աս ազգին ահաւոր մեծութեանը վրայ։

Հ. Հ. Թ

ԼՈՒՏՐԱՅԻ ՄԷՋ ԱՌԱՒՕՏ ՄԸ

ԿԱՄ

ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿՈՐԾԱՆ
ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

“ ՀԱՍ ուրիշ նպատակներու վրայ պիտի խօսինք. որ թէպէտ առջի յիշուածներուն պէս ուղղակի կերպով չեն. բայց անոնք ալ մեր ժողովրդեան գործաւոր մասին խեղճութեան առաջը առնելու համար են։ Այս ընկերութիւններուն ամենուն ալ նպատակն է՝ էրիկ մարդ ու կնիկ մարդ բանուորներու ապրելու բաւական միջոցներ ճարել, և անոնց ծերութեան կամ անկարութեան օրերուն համար բաւական դրամագլուխ մը կամ եկամուտ մը պատրաստել։ Այսինքն ալ ցանկը միւս ողորմածական ընկերութեց պէս բազմաթիւ է, որոնց ամենուն ալ պակասորդը հարուստներուն կամաւոր տուրքերով կը լեցուի։

“ Այսինքն ընկերութիւններ կան եկեղեցականաց համար, զօրաց համար, նաւաստեաց համար, զբաղիտաց համար, գեղարուեստագիտաց համար, այր և կին ուսուցչաց համար, վերջապէս

ազգի մը մէջ գտնուած ամէն արհեստից համար։

“ Այսինքն էտքը նշանակուած են ուրիշ նպատակ ընկերութիւններ՝ աղքատներուն կրթութեանը համար, որոնց ցուցակը հատորին կէսը լեցուցած է։

“ Ատքը՝ յատուկ կրօնական ընկերութիւնները որոնց նպատակն է՝ բարեպաշտական գրքեր ձրի տարածել ժողովրդեան մէջ։

“ Ատքը՝ ուրիշ ընկերութիւններ սուրբ Վիրք տպելու ու բոլոր աշխարհքի մէջ ձրի բաժնելու համար, այս ընկերութեան անդամոց խնամքովը ու անհուն ծախքովը ամէն օթ և աններուն սենեակները, ամէն շոգենաւերուն խուցերը, ամէն գինետուններուն ու կերակրատուններուն գրասենեակները պէտք է որ կազմած նոր կտակարան մը գտնուի. ճանապարհորդ մը իր առանձնաբնակ սենեակը մտած ատենը կը պարտաւորի, գոնէ ժամանակ անցընելու համար, բաւալու այն գիրքը, որ իր անմահական վախճանին վրայ կը խօսի։ Վախուն վերեւը բարեկամ մը կը գտնէ, որ իր պարապոյ ժամերը կը դիտէ և կը սպասէ, որ իր խորհուրդները սրբէ։

“ Ատքը՝ կրօնական քարոզութեանց ընկերութիւնները, թէ՛ Վեգլիոյ մէջ գտնուած ամէն տեսակ արհեստաւորաց համար և թէ՛ դրսի ամէն երկիրներու համար։

“ Ատքը՝ գերութիւնը վերցունելու ընկերութիւնը, որ արդէն Վեգլիոյ և Վաղղիոյ մէջ իր նպատակին հասած, կ'աշխատի բոլոր աշխարհքի մէջէն ալ վերցունել այս մարդկութեան հակառակ անօրէնութիւնը։

“ Ատքը՝ խաղաղասիրաց ընկերութիւնը, որ կը ջանայ փիլիսոփայութիւնը ամենուն սիրելի ընելու, և մարդկութեան համար նոր քաղաքականութիւն մը և նոր կենցաղագիտութիւն ազգաց հաստատելու։

“ Ատքը՝ այն ընկերակցութիւնները, որոնց նպատակն է՝ զազիր և առողջութեան փնասակար բնակարանները վերցունել, ուր թշուառութիւնը վայ-

րենութիւն ու մոլութիւն ստաջ կը բերէ, և շինել մեծամեծ և ընդարձակ տուններ քաղաք Գործադրաց անուանելով, որ աշխատութեան գեղեցկաշէն ձմերուցներուն պէս օրէ օր կը բարձրանան | ինտրայի բազմամարդ փողոցներուն իրար կցած տեղերը : Այս ընդարձակ շինուածներուն մէջ բնակութեան ամէն պէտք եղածը լման կայ զարմանալի աժնութեամբ, օդ, լոյս, կրակ, կաղով լուսաւորութիւն, վազուկ ջուր ամէն սենեակի մէջ, աւելածները թափելու աղբիւս ամէն բնակարանի քով : Այս բնակարանները ձրի չեն . հարուստին տուրքովը շինուած՝ այն պայմանով բանուորին կը տրուին, որ մաքուր պահէ, բարի վարք ունենայ և վարձքն ալ, որ քիչ բան մըն է, անխափան վճարէ : Այսով բանուորին զգացմունքներն և ունակութիւնները քիչ քիչ փոխուելով, իր յարգն ու պատիւը ճանչնալու կը հասնի, անկէջ ալ բնականաբար ուրիշ բարոյական առաքինութեց ճամբայ կը բացուի իրեն :

Հոս առաջնորդս ձեռքի գիրքը գցելով՝ ըսաւ պարծանքով մը . « Այ՛ն որ մեր աչքէ անցունելիք շինութեանց անհուն ցուցակը քեզի բացատրել ուզեմ, ծայրը չգար : Վալէ, երթանք քաղաքիս այլ և այլ թաղերը, և հետո ներս մտիր ու պտրտէ գլխաւոր շինուածները, որ հարուստներուն տասանորդներովը շինուած են աղքատաց համար . հիւանդանոցները, դպրոցները, բանտերը, հասարակութեան համար զրավաճառանոցները, հացարանները, սպանդարանները, լուացարանները, բաղնետունները, գործաւորաց բնակարանները, աշխատութենէ դադարելոյ և հասոյթաւուններու համար հաստատուած գրասենեակները, բարուց ուղղութեան վկայական ունեցողներուն ստակ փոխ տալու տունները, սպասաւորաց տեղ գտնալու տունները, հիւանդ խնամելու տունները, եկեղեցիները, մատուռները, տղոց ապաստանարանները ցորեկուան համար, կրակ չունեցող մարդոց ապաստանարանները գիշերուան համար, աղքատներուն ուտելիք բաժնելու տուններ :

ըր : Տես, դիտէ և ուրախացիր այս բարի նախանձաւորութեան և ժողովրդեան օգնելու եռանդին վրայ, որուն նմանը թերեւս բնաւ մէկ ազնուապետութեան մը մէջ տեսնուած չէ աշխարհքիս վրայ » :

Այս մարդուս ետեւէն գնացի, մութը սկսաւ կոխել, ցերեկուան լուսին տեղ երևան ելան կազի անթիւ լուսերը | ինտրայի արուարձաններուն ու շրջակայներուն մէջ, ու մենք դեռ չէինք լմնցուցած մեր տեսնելու շինութիւնները, որոնք | Եծին Նրիտանիոյ պահպանողական ընկերականութեան յիշատակարաններն են, և որոնց միտթաւրական վիճակագրութիւնը կ'ընէինք :

Արբոր կառք կը նստէի բնակարանադառնալու համար, այս աղէկութիւններուն վրայ ունեցած հիացմունքս ու զարմանքս յայտնեցի առաջնորդիս անկեղծ բերկրութեամբ :

— « Ենք ինքզինքնիս պիտի ազատենք, ըսաւ առաջնորդս բարեպաշտական ուրախութեամբ մը և ձեռքս թօթվելով, անտարակոյս մենք զմեզ պիտի ազատենք այս ճամբան բռնելով : Ամենէն աղէկ քաղաքականութիւնը՝ բարեսիրութիւնն է . հասարակաց բարիք ընելու առաքինութիւնը՝ ազգի մը առաջին ուժն է : Արբոր կը տեսնես որ ազգ մը ինքզինքն ուղղելու և ժողովրդեան ամէն կերպով աղէկութիւն ընելու ետեւէ է, յոյս ունեցիր անոր վրայ : Արբոր կը տեսնես միջակային կամ ազնուապետական ազգ մը, որ կը խստանայ և իր անձնասիրութեանը մէջ կը կծկի, ասանկ ազգ մը թէ և բիւրաւոր զինուորներ և բիւրաւոր բանտապաններ ունենայ ինքզինքը պաշտպանելու համար, յոյսդ կտրէ անկէ . վասն զի աստուածային ազդեցութիւնը դադարած է ան ազգին մէջէն » :

— « Այո, ըսի իրեն, կը հաւատամ ըսածներուդ . տարակոյս չունիմ որ Աստուած զինքը պաշտպան ունող ազգը կը պահպանէ : Բայց այն թերութիւնները, որ ձեր ազնուապետական օրէնքներուն ուժովը՝ գետնի ստացուածոց

քանի մը հարուստ բայց քիչուոր կալուածատէրներու ձեռք գտնուելէն առաջ կու գան, անյաղթելի արգելքներ չէն ձեր գեղացի ժողովրդեան վիճակին աղէկնալուն, և անոնց ու արուեստաւոր ժողովրդոց աժան ու հանգիստ ապրելով բազմանալուն ու զօրանալուն :

Եւ խնամատարութեան միջոցները, որ հարստութիւնը գործի կը դնէ ձեր քաղաքներուն աղքատ ժողովրդեանը համար, ինչպէս կրնաք տարածել ձեր Խաչատուրի, Սիւրբ Գրիգորի և Կոմսութեան երկիրները գտնուող աղքատ ժողովուրդներուն վրայ :

— « Եւ բան չեմ պահէր, պատասխանեց առաջնորդս : Սեր ստացուածոց օրէնքները, որ երկրի ժառանգական ազնուապետութիւնը մշտնջենաւորելու մտքով՝ կալուածապետութեան ժամանակները հաստատուած են, նոյն հոգին մինչև հիմա կը պահեն : Եւ օրէնքներուն հոգին քրիստոնէական հոգի չէ, այլ մարդոց մէկ մասը ուրիշ մասի մը ստացուածքն ընելու, և անոնց մեծ մասին ոտքին տակի երկիրը նեղացունելու և զանոնք ստրուկ ընելու հոգի է : Եւ օրէնքներուն մենք դեռ դպած չենք, որովհետեւ մեր սահմանադրութիւնը անոնց վրայ հաստատուած է, և մենք չենք ուզեր որ մեր սահմանադրութիւնը՝ տակը ուրիշ նեղակներ չգրած փլէի : Եւ քայլափոխները, որ դուք Վաղարշի մէջ մէկ օրը կ'ընէք յեղափոխութիւններ ընելով ու նորէն ետ դառնալով, մենք անոնք յիսուն տարին կ'ընենք :

« Եւ այս սակայն թէպէտ և մեր երկրի ազնուապետութիւնը չուզեր որ հոգի տէր ըլլալու բարութիւնը մեր դաշտային ժողովրդեան մէջ տարածի, սակայն այս մասին ալ, քանի մը տարիէն ի վեր մեր բարուց մեղմելով, կը ջանանք, օրինաց թոյլ տալուն չափ, որ ժողովրդեան գանգատները դադրեցունենք մեծ կալուածատերանց դէմ :

— « Ինչպէս, հարցուցի իրեն :

— « Բանի մը կերպով, ըսաւ :

« Եւ, մեր երկրի տէր ազնուական

ները անդադար իրենց երկրէն կը հեռանային, մանաւանդ Խաչատուրի մէջ գտնուողները : Կ'երթային ուրիշ տեղ կ'ուտէին իրենց եկամուտները, որ հոգին բերաննին եկած վարձուորներն իրենց ձեռքը լեցուցեր էին : և ասանկով մեծ փնաս կ'ըլլար մեր գաւառներուն, որոնց արդիւնքը բովանդակ Խաչատուրի ուրիշ երկիրները՝ կամ Խոնարա կ'երթար : Հասարակութեան աղաղակը իմացուց կալուածատէրներուն որ այս բանը տրտուներ և փնասուց պատճառ կ'ըլլար իրենց ստացուածոցը : () րէնք չգրուեցաւ, որ անոնք իրենց երկիրներուն մէջ նստին, բայց արգարութիւնն ու խոհեմութիւն իրենց մտածել տուին : Ստի սկսան իրենց երկիրներուն մէջ աւելի նստելու ու հոն ծախք ընելու, և Խաչատուրի ապարանքներուն մէջ մըս խած ստակնին՝ սկսան շինութիւններ ու բարեկարգութիւններ ընելու և գործաւորաց վարձ տալու գործածել : Եւ սանկով տարւոյն մէկ մասը իրենց կալուածներուն մէջ անցունելը, հարուստ ազնուականաց մէջ բարոյական օրէնք մը եղաւ : Եւ բանը մեծ ազդեցութիւն ըրաւ բոլոր երկրին վրայ : Տրտուները դադրեցան, ստակը սկսաւ իր աղբիւրին տակը պտըտիլ և անիկայ աւելի զօրացունել : Եւ արդէ կալուածոց տէրերը մտածելով, որ իրենց երկիրներէն առած վարձքերնին շատ չափազանց ըլլալով, վարձուորներուն փլէլուն պատճառ կ'ըլլան՝ հոգերուն վարձքը քիչացունին :

« Եւ Երջապէս մեծ քաղաքագէտ մը եկաւ ազգային տնտեսութեան մասին, Պ. Փիլ, որ համարձակեցաւ հարուստ ազնուականները ցաւցընելու, որ զիրենք բժշկէ և ազատէ : Եւ անկով իր գերեզմանը ժողովրդեան սրտին մէջ շինեց :

— « Ինչ ըրաւ որ :

— « Երկու բան, պատասխանեց բարեկամ, երկու բան, որ այսօրուան օրս մեր կալուածատէր ազնուականները կը նզովեն, բայց շատ չքէր, երկրին բոլոր խելացիները պիտի օրհնեն : Եւ

նաւաճառութեան օրէնք մը գտաւ իր առջև, որ բոլորովին Նիգղիոյ հողի տէրերուն շահուն համար էր, այսինքն արհաւիր օրէնք, որ հացը սուղ կը կերցունէր ժողովրդեան, որպէս զի հարուստ հողի տէրերը տարապայման շահ ընեն, ցորեն բուսցնողը միայն իրենք ըլլալով: 11. Փիլ համարձակեցաւ զարնուելու այս բռնաւորութեան դէմ, որ ժողովրդեան ուտելիքին վրայ ծանրացեր էր, և արմտեաց նոր օրէնքը հաստատել տուաւ, որ դրսէն ցորեն բերելու ազատութիւն տալով, հացին գինը՝ ուտողներուն կարողութեանը հաւասարեց: 12. Ինչ մասին չափազանց հարստութիւնը քիչ մը վրայ տուաւ, միւսներուն ապրելու և ուտելու կարողութիւնը եւեցաւ: 13. Երանկով՝ կենաց ամենէն հարկաւոր սարէնները բուսցունողներուն ու ուտողներուն մէջ հաւասարակշռութիւն հաստատեցաւ: 14. Փիլի ապրանաց օրէնքը:

— 1. Ո՛վ վճռեց այս օրէնքը, ըսի իրեն:

— 2. Իրենք ագնուականները, ըսաւ առաջնորդս: Իրենք կրեցին այս հարուածը, բայց ամենէն առաջ իրենց խելքը պառկեցաւ որ կրել հարկ էր: 3. Իրենք արդարութիւն ըրին, բայց ժողովուրդն ալ իր կողմէն արդարութիւն ըրաւ ինքզինքը վար դնելով:

Վիշերուան միւլթը աղէկ մը կոխեր էր երբոր առաջնորդէս զատուեցայ. միտքս բոլորովին զբաղած էր տեսածներովս, ականջս ալ լսածներովս: 15. Ես ազգը ինքզինքը պիտի ազատէ ընկերական պատերազմներէ, կ'ըսէի ինքնիրենս, քանի որ իր գլուխը ասանկ մարդիկ օւնենայ, ասանկ ժողովրդեան վրայ սէր ունեցող մարդիկ, որ անոր օրինաւոր տրտունջները տեսնելով, արդար իրաւունք ընեն առանց ժամանակ անցընելու, ասանկ աստուածասէր մարդիկ, որոնց ազդէ Նստուած՝ ժողովրդեան թշուառներուն համար գթութիւն, արդարութիւն, խնամք և պաշտպանութիւն ընելու իմաստները: 16. Ես մանադրութիւն մը, թէ և պակասաւոր

ըլլայ, երբոր շտկուի, նեցուկներով ամրանայ, նորոգուի ու ծեփուի ասանկ մարդկութեամբ և ասանկ խոհեմութեամբ, կրնայ անհամար տարիներ տևել: 17. Երբոր բարքը կը շտկէ օրինաց պակասութիւնները:

18. Ես խորհրդածութենէն ետեւ 19. ամբթին խօսքը կը դարձնէ գաղղիացւոց վրայ և յորդոր կու տայ անգղիացւոց օրինակովը իրենց քաղաքական ընկերութիւնը շտկելու, որով առաջ առնուի հիմակուան կասկածելի վիճակին և ապագայ խռովութեանց:

Ա. ՏԵԼԼԱՄԱՐԹԻՆ

ԹԵՐԳՄԱՆԵՑ Կ. Ս. ԻԹԻԹԻՃԵԱՆ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆԻ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս Բ. Ածխային կազի վրայ:

1. Ես 29. Ես որ վերը ըսինք օդուն մէջ ածխային կազ ալ կայ. ուստի պէտք է որ օդոյ վրայ խօսած ատեննիս ասոր վրայ ալ տեղեկութիւն մը տանք: 2. Ես կազը թէ բնութեամբ և թէ արուեստով շատ կը գործածուի. կրի հետ միանալով կ'ըլլան կաւիճ ու մարմարին. բոլորին ու ժամակներու պատեանին ալ զլխաւոր նիւթն է. գինիի ու գարեջրի խմորման ատեն ու շամբանիայի գինիէն ելածն ալ նոյն կազն է. ինչպէս նաև կազոտ լեմոնաջրերուն, 3. Իշի, 4. Ելց ու 5. Իսա ըստած ջրերուն մէջն ալ շատ կը գտնուի:

6. Ես 7. Ես ըստելուն պատճառը յայտնի է. վասն զի իրեն բաղադրութեան մէջ ածխի մասունք կան. և է զուտ ածխին թթուածնի հետ միացածը. ուստի թթուածնի հետ միացած ըլլալուն համար ալ կազ թթու ածխային՝ կ'ըսուի, որովհետեւ թթու ու բարկ համ մը կ'ունենայ: — 8. Ես 9. Ես